Ս.ՇՏԻԿՅԱՆ

ՂՈՒԿԱՍ ԻՆՃԻՃՅԱՆԻ ԵՐԿՈՒ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ

Առաջին հարցը, որ անմիջապես ծագում է XIX դարի սկզբին Վենետիկում հրատարակված «Տարեգրություն» պարբերականի կապակցությամբ, հետևյալն է՝ ով է նրա խմբագիր-հրատարակիչը: «Տարեգրության» և ոչ մի հատորի վրա այդ կարգի նշումներ չկան, Մխիթարյան միաբանության հետագա ուսումնասիրողներն էլ այդ կարևոր հարցի պարզաբանմանը ինչ-ինչ պատճառներով կամ չեն անդրադարձել, կամ էլ բավարարվել են հպանցիկ հիշատակումներով միայն: Առաջին անգամ «Տարեգրության» մասին գրել է, որքան մեզ հայտնի է, Գարեգին Զարբհանալյանը, որն իր «Պատմություն հայերեն դպրության» աշխատության մեջ[1] տալով հիշյալ պարբերականի նկարագիրը, ավելացնում է. «Հայերեն պարբերական գրվածոց մեջ առաջին կրնան սեպվիլ ժամանակի կարգավ «Տարեգրություն» կոչված տետրակներն, որք 1799-1802 տարիներուն մեջ հրատարակված են ի Վենետիկ, յաշխարհիկ լեզու և կամփոփեն քաղաքական դիպվածներ, բանասիրական տեղեկություններ, պատերազմաց լուրեր և ուրիշ ասոնց նման գիտելիք» (էջ 470):

Զարբհանալյանը, ինչպես տեսնում ենք, խմբագիր-հրատարակչի մասին ոչ մի խոսք չի ասում, և ինչպես հետո կտեսնենք, «Տարեգրության» հրատարակության թվականներն էլ սխալ է նշում: Հինգ տարի հետո հրատարակած մյուս աշխատության՝ «Հայկական մատենագիտության» մեջ, դարձյալ անդրադառնալով նույն հարցին, Զարբհանալյանը կրկին հեղինակ կամ խմբագիր չի նշում[2], թեև անում է որոշ ճշգրտումներ հրատարակության թվականների վերաբերյալ:

---

[1] Գ.Զարբհանալյան, Պատմություն հայերեն դպրության, մաս Բ, Վենետիկ, 1878 թ.

[2] Գ.Զարբհանալյան, Հայկական մատենագիտություն, Վենետիկ, էջ 662

«Տարեգրության» խմբագիր-հրատարակչի մասին առաջին անգամ հանդիպում ենք Գրիգորիս Գալեմքյարյանի մոտ[3]։ Արձանագրելով, որ այդ պատիվը պատկանում է Ղուկաս Ինճիճյանին, Գալեմքյարյանն ավելացնում է, որ հիշյալ տեղեկությունն ինքը վերցրել է 1869 թվականին Վենետիկում հրատարակված Մխիթարյան միաբանության գրացուցակից։ Այս փաստն էլ կրկնել են հայ պարբերական մամուլի պատմությամբ զբաղվող մյուս մասնագետները՝ Քոսյան, Զամինյան, Գար. Լևոնյան, թեև իսկույն շտապել են ծանուցել, որ Ինճիճյանի՝ «Տարեգրության» խմբագիր-հրատարակիչ լինելը հավաստող որևէ այլ կռվան իրենց հայտնի չէ։ Իրավացի է Արտաշես Կարինյանը, երբ «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության մեջ անդրադառնալով այս հարցին, դժգոհում է, որ Վենետիկի Մխիթարյանները «Տարեգրքի» հետ կապված այս կարևոր «մանրամասնը» մինչև օրս չեն կարողացել ճշտել։

Ո՞վ է, ուրեմն, «Տարեգրության» խմբագիր-հրատարակիչը։

Ղուկաս Ինճիճյանը մեր այն հեղինակներից է, ով որևէ դեպք կամ եղելություն շարադրելիս, սովորություն ունի ընթերցողներին հղել դեպի իր մյուս՝ որևէ աշխատություն, այնտեղից ավելի հանգամանալից տեղեկություններ ստանալու համար։ Հենց այս հանգամանքն էլ զգալի կերպով օգնում է մեզ վերոհիշյալ հարցին պատասխանելու համար։ Օրինակ, իր «Դարապատում» աշխատության VI հատորում, նկարագրելով ֆրանս-գերմանական պատերազմը, գրում է. «Թե կուզես որ ֆրանսըզին ու նեմեցին զարնըվիլը Ճենովայի վրա ավելի տեղնիտեղը լսել՝ ԳՐԵՐ ԵՆՔ 1800 ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. հոն նայե, 28 թղթեն, ինչվան 35 թուղթ» (էջ 424. այս և հետագա ընդգծումները մերն են)։ Կամ նույն աշխատության մեջ, նկարագրելով Հյուսիսային Իտալիայի նվաճումը

[3] Գր.Գալեմքյարյան, Պատմություն հայ լրագրության, Վիեննա, 1893, էջ 25

նապոլեոնյան զորաբանակների կողմից, Ինճիճյանը հավելում է. «Թե որ կուզես ավելի ընդարձակ կարդալ աս բաներուս վրա, ԳՐԵՐ ԵՆՔ 1801 ՏԱՐԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ. Ա մասն, որ է պատերազմական վիճակ աշխարհիս, հոն կարդա, 4 թղթեն, ինչվան 14» (անդ, էջ 430): «Դարապատումի» տարբեր հատորներից կատարված այսպիսի հղումներ, բարեբախտաբար, կարելի է էլի բերել, և մենք միտումնավոր բերեցինք Ինճիճյանի հղումները դեպի «Տարեգրության» տարբեր տարիները, որպեսզի կասկածի տեղիք չմնա, որ նա իրոք հանդիսացել է բոլոր համարների խմբագիր հրատարակիչը: Կարծել, որ Ինճիճյանը պատահաբար կամ սխալմամբ է կատարում այդ հղումները, ճիշտ չի լինի, որովհետև դրանք, ինչպես ակնհայտ է, միանգամայն որոշակի և գիտակցված բնույթ ունեն: Իսկ ենթադրել, որ Ինճիճյանը, օգտվելով այն բանից, որ «Տարեգրության» ոչ մի հատորի վրա նշված չէ հրատարակողի ով լինելը, կամենում է սեփականել ուրիշի աշխատանքը, անմտություն կլինի: Մնում է գալ այն միակ ու վերջնական եզրակացությանը, որ Վենետիկում, դարասկզբին հրատարակված «Տարեգրություն» պարբերականի խմբագիր-հրատարակիչը, կամ ինչպես հաճախ գրում են Մխիթարյանները, «հորինողը» իրոք Ղուկաս Ինճիճյանն է:

Մյուս, ոչ պակաս կարևոր հարցը վերաբերում է «Տարեգրության» հրատարակության ժամանակահատվածին: Այստեղ էլ փաստերը տարբեր են և հաճախ իրարամերժ: Զարբհանալյանը, ինչպես արդեն ասացինք, առանց որևէ փաստարկման նշում է 1799-1802 թվականները: Գալեմքյարյանն իր աշխատության մեջ «Տարեգրության» հրատարակության համար ընդունում է 1800-1802 թվականները: Գարեգին Լևոնյանը «Հայոց պարբերական մամուլը» աշխատության մեջ նշում է, որ «Տարեգրությունը» լույս է տեսել 1800-1803 թվականներին[4], սակայն նույն Գարեգին Լևոնյանը 1934 թվականին հրատարակած «Լիակատար ցուցակ հայ լրագրության» աշխատության մեջ

---

[4] Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 9-10

միանգամայն այլ թվեր է դնում՝ 1799-1802 (էջ 3)։ Եվ վերջապես, Արտաշես Կարինյանը հանգամանորեն քննելով «Տարեգրությունը» կրկնում է հրատարակության հին թվականը՝ 1800-1802[5]։

«Տարեգրության» առաջին հատորի հրատարակման թվականը ճշտելուն օգնում է հենց ինքը՝ Ինճիճյանը։ Նույն տարեգրքի 1802 թվականի համարում, սկսելով հայկական ամիսների նկարագրությունը և անդրադառնալով փետրվարին, նա գրում է. «Հռոմուլոսի ատենը չիկար այս ամիսը, ԻՆՉՊԵՍ ՈՐ ԸՍԻՆՔ ԱՌՋԻ ՏԵՏՐԱԿԻՆ ՄԵՋ. Նումա, իր հաջորդը ավելցուց և տարվույն էն ետքի ամիսը դրավ, 28 օր տալով»։ Եվ իսկապես, 1800 թվականի «Տարեգրության» մեջ Ինճիճյանը, բացատրելով ամսանունների ծագումը, երկար կանգ է առնում փետրվարի վրա, տալիս է նրա հունական անվանումը, ստուգաբանությունը, նկարագրում է այդ ամսվա ընթացքում կատարվող տոները և այլն։ Այս ամենն ասված է, ինչպես վկայում է Ինճիճյանը, «Առջի տետրակում», այսինքն՝ 1800 թվականին հրատարակված «Տարեգրությունը» նա համարում է առաջին «տարեգնացը»։ Եթե նշենք, որ այլնայլ առիթներով բազմաթիվ հղումներ անելով «Տարեգրության» այս կամ այն հատորներին, Ինճիճյանը 1800-ից առաջ հրատարակված և ոչ մի համար երբեք չի հիշատակում, և եթե ավելացնենք, որ հայ բանասիրությամբ ու մամուլի պատմությամբ զբաղվողներից ոչ ոք ավելի քան 150 տարվա ընթացքում 1800 թվականից առաջ տպագրված «Տարեգրքի» ոչ մի համար չի տեսել, չի վկայակոչել և չի հիշատակել, ապա կարելի կլինի անվերապահորեն պնդել, որ Ղուկաս Ինճիճյանի «Տարեգրությունը» սկսել է հրատարակվել 1800 թվականից։

Հաջորդ տարիների տարեթվերի հրատարակություններն արդեն բնականոն ընթացք են ստանում։ Յուրաքանչյուր ամսագիր լույս է տեսնում տվյալ

---

[5] Ա.Կարինյան, Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. Բ, 1960, էջ 102-124

տարվա վերջին և ներկայացնում է գերազանցապես նախորդ տարվա ընթացքում տեղի ունեցած պատմա-քաղաքական դեպքերը: 1800 թվականի «Տարեգրությունն», օրինակ, պատմում է 1799 թվականին տեղի ունեցած նշանավոր իրադարձությունները, 1801 թ. ամսագիրը՝ 1800 թթ. դեպքերը, այսպես, մինչև 1803 թվականը: Այդ թվին հրատարակվում է «Տարեգրության» չորրորդ՝ վերջին, տետրը: Հիշյալ տետրը նախորդների համեմատությամբ սակավագյուտ է այնքան, որ որոշ բանասերներ նույնիսկ գտնում էին, որ այն ընդհանրապես չի հրատարակվել: Համառոտակի նշենք, որ այս համարը ձեռքի տակ ունեցել է բանասեր Ներսես Ակինյանը, ով տվել է դրա համառոտ նկարագրությունն ու գիտա-բանասիրական բնութագիրը[6]:

Թե ինչն է եղել «Տարեգրություն» պարբերականի դադարեցման պատճառը, դժվար է ասել: Որոշակիորեն կարելի է պնդել, որ հայության ընթերցող հատվածը մեծ սեր չի ցուցաբերել դեպի Ինճիճյանի այս գործը: Այս կապակցությամբ 1828 թ. հրատարակված «Դարապատումի» VI հատորում, նկարագրելով Պավել I կայսեր մահը և մատնանշելով, որ այդ մասին ավելի մանրամասն գրված է «Տարեգրության»1801 թվականի համարում, Ինճիճյանն ավելացնում է. «Որ եթե ժողովրդյան ընդունելի ըլլար՝ միտք ունեինք աս տարեգրությունը ամմեն տարի ինչվան հիմա շարունակել, օրեօր տեղեկություններ ավելցընելով, ինչպես որ ետքեն հանել սկսավ Լե Սյուռ Փարիզի մեջ: Դիպվածները պատմելեն զատ վերջը պիտոր դնեինք նոր գյուտերն, որ ամեն տարի մեկ կգտնան, խելացի դատաստանները, որ աշխըրքիս մեջ կըլլան, թագավորաց դաշնագրությունները, երևելի ճամբորդությունները և այլն» (էջ 444):

Հիշյալ հատվածը, բացի նրանից, որ մի անգամ ևս վկայում է Ինճիճյանի՝ «Տարեգրության» խմբագիր-հրատարակիչ լինելու փաստը, կարևոր է նաև մի

---

[6] «Հանդես ամսօրյա», 1936, № 4-6, «Դիտակ բյուզանդյան» պարբերագրին անդրանիկ թիվը, լույս տեսած 1808-ին

պատճառով նս։ Պատահական չէ ֆրանսիացի պատմաբան, հոդվածագիր Շարլ-Լուի Լը Սյուրի (1770—1849) անվան հիշատակումը։ Վերջինս գրական-հրատարակչական և հրապարակախոսական բազմաբնույթ գործունեություն ծավալելուց բացի, հիմնադիրը հանդիսացավ «Քաղաքական և պատմական տարեգիրք» խորագիրը կրող ֆրանսերեն մատենաշարին, որն սկսեց հրատարակվել 1828 թ.։ Յուրաքանչյուր գրքույկ տպագրվում էր տարին մեկ անգամ և ներկայացնում էր տվյալ տարվա գրական-պատմական և հասարակական-քաղաքական նորությունները։ Այս է, որ նկատի ունի Ինճիճյանը վերոհիշյալ ակնարկում։ Այստեղից էլ հասկանալի է դառնում, թե ինչն է ժողովրդի համար որպես օրինակ վկայակոչում հայ վարդապետը «Տարեգրությունները» հրատարակելիս։

Մեջբերումն ուշադիր կարդալիս նկատելի է այն դժգոհ տոնը, որով Ինճիճյանը խոսում է «Տարեգրության»՝ ընթերցողների կողմից քիչ ընդունելի լինելու մասին։ Առհասարակ, իր բազմաթիվ աշխատություններում նա հնարավոր առիթը բաց չի թողնում «ընթերցասեր հայազգիներից» դժգոհելու, որ նրանք չեն խրախուսում իր գործը, օգնական և սատար չեն հանդիսանում իրեն, չեն հետաքրքրվում իր աշխատությամբ և այլն։ Այս տրտունջը մեկնաբանելն այնքան էլ դժվար չէ։ Ինճիճյանի հրատարակած պարբերականները՝ «Տարեգրությունը», հետագայում նաև «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը» անհամեմատ ավելի բարձր էին կանգնած իր ժամանակաշրջանի ընթերցողների պահանջներից։ XVIII դարավերջի և XIX դարի սկզբի մտավոր-գրական ցածր մակարդակ ունեցող և «Եփրեմ Խուրին»-ով, «Պատմություն Պղնձե քաղաքի»-ով, Խիկար իմաստունի առակներով իր հոգևոր կարիքները բավարարող ընթերցողներին Ինճիճյանը մատուցում էր ֆրանսիական հեղափոխության, նրա բնույթի ու շարժիչ ուժերի, ֆրանսիացի լուսավորիչների գործունեության, Նապոլեոնի իտալական արշավանքների մասին հոդվածներ, տալիս էր եվրոպական պետությունների

վերջին տարիների վերլուծական պատմությունը, ժամանակի արվեստների՝ թատրոնի, արձանագործության, երաժշտության, ճարտարապետության և դրանց ականավոր ներկայացուցիչների վերլուծական նկարագրությունը և այլն: Հասկանալի է, որ նման նյութերը շատ էլ չէին հետաքրքրում հայությանը, և սա էլ վճռեց «Տարեգրության» բախտը: 1803 թ. չորրորդ համարի հրատարակումից հետո, «Տարեգրությունը» դադարեց, և այդ դադարը նրա համար հարատև եղավ:

* * *

Խոսքն այս անգամ վերաբերում է հայ պարբերական մամուլի պատմության մեջ իրավացիորեն երիցագույնը համարվող «Եղանակ բյուզանդյան -բազմավեպ» (հայտնի է նաև կրճատ «Եղանակ» տարբերակով) տարեգրքին, որի կապակցությամբ արվող մի քանի մանրամասների ճշգրտումը նոր լույս է սփռում նրա հրատարակության տևողության, պարբերականության, տարեգրքի հրատարակման պատճառների, խմբագիր-հրատարակիչ Ղուկաս Ինճիճյանի անձնավորության և մի քանի այլ հարցերի վրա:

«Եղանակ բյուզանդյան-բազմավեպ» տարեգրքի հատորներին թեթևակի ծանոթանալիս անգամ, նկատելի է, որ վերջիններս խիստ ինքնատիպ բնույթ ունեն: Յուրաքանչյուր տարեթիվ անպայման ունի տվյալ տարվա բոլոր տասներկու ամիսների աստղաբաշխական նկարագիրը՝ համապատասխան բնութագրականներով: Սրան հաջորդում են յուրաքանչյուր ամսվա գիտական տվյալները՝ օրվա տևողություն, արևածագի ու մայրամուտի ժամեր, գիշերահավասարներ, յուրաքանչյուր օրվա ընթացքում տեղի ունեցած բնական երևույթները՝ տեղումնալից օր, լուսնի նորել, լիալուսնի տևողություն, և այս ամենը տրված հաճախ վայրկյանների ճշգրտությամբ: Այս ուղղությունն էլ, առավել կամ պակաս չափով, գերակշռող է մնում բոլոր տարիների համար: Նման գիտա-աստղաբաշխական բնույթի տարեգիրքն աննախընթաց է ինչպես

Մխիթարյան միաբանության գրական անդաստանում, այնպես էլ դարասկզբի հայ մտավորականության կյանքում: Հարց է ծագում. որտեղի՞ց էր վերցրել Ինճիճյանը տարեգրքի նախագաղափարը, ո՞վ էր դրդիչ հանդիսացել նրան այսպիսի աշխատության հրատարակության համար:

«Դարապատում» բազմահատոր աշխատության մեջ նկարագրելով ժամանակաշրջանի անվանի անձանց և դրանց թվում շարադրելով իտալացի աստղաբաշխ Ջուզեպպե Տոալդոյի կյանքը, Ինճիճյանը գրում է. «Աս բարեսիրտ աստղաբաշխը, որուն հետ շատ տեսնըվիլ եղած է ընտանի բարեկամություն ունենալով, մեզի հորդոր եղավ, իրեն ըրածին պես, Սթանպոլին վրա ԵՂԱՆԱԿ (ընդգծումը մերը չէ. Ս.Շ.) հանել: Առաջ հանելու (իմա. նշելու. Ս.Շ.) արեգակնային ըրած փոփոխությանց օրերը, ետքը լուսընկային, որ կըլլա շատ տարի գրվելեն ետև իրեն շրջանները հանելու համար»: Ասես ամբողջացնելու համար այս կարևոր վկայությունը, Ինճիճյանը քիչ հետո շարունակում է. «Ասոր հորդոր օրինակը աս պտուղը բերավ, որ մենք ալ, Ստամպոլ գալեն ետև, արևուն ըրած փոփոխությունները ետևէ ետև նշանակելով, արեգակնային փոփոխությունը Ստանպոլին վրա երևան ելավ… ինչպես որ ընթերցասերքը կրնան «Եղանակներուն» մեջ գտնալ»[7]:

Իտալացի աստղաբաշխ Ջուզեպպե Տոալդոն (1719-1798) անհայտ անուն չէ աստղաբաշխության պատմության մեջ: Տիեզերական մեխանիկայի օրենքների բացահայտմանը նվիրված մի քանի աշխատություններից բացի, նա նշանավոր հանդիսացավ երկնային մարմինների՝ մեր մոլորակի վրա ունեցած փոխներգործությունների ուսումնասիրության բնագավառում: Այս նպատակով նա 1773 թ. մինչև իր մահը «Աստղօդերևույթ օրացույց» ընդհանուր վերտառության ներքո հրատարակում էր տվյալ տարվա ամիսների, օրերի գիտա-

[7] Ղ.Ինճիճյան, Դարապատում, հ. 8, Վենետիկ, 1827, էջ 63-64

աստղաբաշխական տարեգրքեր: Տոալդոն ապրում և աշխատում էր Պադուայում (Հս. Իտալիա) և հաշվարկները կատարում էր այդ քաղաքի համար: Նա նույնը սովորեցրել էր Ինճիճյանին՝ Պոլսի համար, ինչը և վերջինս արել է գրեթե մասնագիտական հմտությամբ: Թե ինչպիսի «ընտանի բարեկամություն» կարող էր լինել այս երկուսի միջև, առայժմ դժվար է ասել, բայց որ հայ վարդապետը իր «Եղանակները» հրատարակել է ուղեցույց ու խորհրդատու ունենալով Տոալդոյին, – արդեն աներկբա է: Դրա համար Ինճիճյանի՝ վերևում բերված վկայությունից բացի, բավական է համեմատել Տոալդոյի «Աստղօդերևույթ օրացույցի» ցանկացած համարը Ինճիճյանի «Եղանակի» որևէ համարի հետ համոզվելու համար, որ վերջինս աստղաբաշխական-օդերևութաբանական ցանկերը կազմելու ձևն անգամ վերցրել է Տոալդոյից:

Իհարկե, Ինճիճյանը շատ լավ գիտեր, որ իր հրատարակությունը նախատեսված է հայ ընթերցողի համար, իսկ XIX դարասկզբի մտավոր առավել քան աննախանձելի մակարդակ ունեցող հային մատուցել սոսկ աստղաբաշխական տարեգիրք, կնշանակեր սկզբից իսկ «Եղանակը» դատապարտել կործանման: Այս հանգամանքը նկատի ունենալով էլ, նա բավականին խելացի կերպով աշխատում էր տարեգիրքը հարմարեցնել ժողովրդի պահանջներին՝ «Եղանակում» զետեղում էր զանազան պատմություններ, առակներ, ժողովրդական ասացվածքներ, ազգային թեմատիկա ունեցող բանաստեղծություններ, պատմա-աշխարհագրական «զբոսեցուցիչ» տեղեկություններ և այլն:

Այսպիսով, կարելի է ասել, որ «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» նախագաղափար-օրինակը Ինճիճյանը վերցրել է իտալացի աստղաբաշխ Ջուզեպպե Տոալդոյից և նրա հրատարակած «Աստղօդերևույթ օրացույցից» ու

չխախտելով հիմնական սկզբունքները, աշխատել է հնարավորինս այն հարմարեցնել հայ ընթերցողի հոգևոր պահանջներին:

«Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» հրատարակության թվականի վերաբերյալ եղած տվյալները հակասական են ու իրարամերժ: Այս կապակցությամբ առաջին հիշատակությանը հանդիպում ենք «Ցուցակ Մխիթարյան տպարանի» խորագիրը կրող գրքույկում (1863, էջ 9), որտեղ տարեգրքի հրատարակությունը նշված է 1815-1820 թթ., խմբագիրը՝ Ղուկաս Ինճիճյան: 1893 թ. հրատարակված գրացուցակը (էջ 17), առանց որևէ փաստարկման արդեն նոր թվական է հիշատակում՝ 1800-1820: Այս թվականն էլ միաբանության գրացուցակներում պարբերաբար կրկնվել է մինչև վերջերս: 1878 թ. Վենետիկում հրատարակված Գարեգին Զարբհանալյանի՝ արդեն հիշատակված «Պատմություն հայերեն դպրության» աշխատության երկրորդ հատորում, հեղինակը «Մեր դարը» գլխում տալով հայկական պարբերականների հրատարակության համառոտ տեսությունը, անդրադառնում է նաև «Եղանակ բյուզանդյան-բազմավեպին» և նշելով նախորդի՝ «Տարեգրություն» պարբերականի տետրակների ջերմ ընդունելությունը ժողովրդի կողմից, ավելացնում է. «Ասոնց ազգին մեջ գտած ընդունելությունը կխրախուսե «Եղանակ բյուզանդյան» կոչված գրքույկներուն հրատարակությանը ձեռք զարնելու, որ և անընդհատ կշարունակվի գրեթե քսան տարվա միջոց (1803-1820), տարվե տարի ավելի հետաքննական և ընդարձակ ճոխությամբ տեղեկություններ հաղորդելով ազգայնոց» (էջ 470): Զարբհանալյանը ոչ մի փաստ չի բերում նոր՝ 1803 թ. հիմնավորելու համար և, ի դեպ, նույն կերպ է վերաբերվում հետագայում նշած թվերին ու փաստերին: Էլ չենք խոսում այն մասին, որ Ինճիճյանի երկու պարբերականների վերաբերյալ ասված խոսքերը, իբր դրանք հայ ընթերցող ու գիտական հասարակայնության կողմից ընդունվում էին մեծ ոգևորությամբ, Մխիթարյան հեղինակներին բնորոշ գովաբանական գրելաձև է, որն, ինչպես

տեսանք և դեռ կտեսնենք, շատ քիչ է համապատասխանում իրականությանը: ՈՒրիշ բան է ասում Զարբհանալյանը 1883 թ. հրատարակած «Հայկական մատենագիտություն» աշխատության մեջ: Տալով «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» նկարագիր-բովանդակությունը, նա հրատարակության միանգամայն այլ թիվ է դնում՝ 1800-1820: Նախ նշենք, որ վերոհիշյալ աշխատությունը պատրաստելիս Զարբհանալյանը ձեռքի տակ ունեցել է միայն 1815 թ. «Եղանակ բյուզանդյանը», որովհետև բերված նկարագիր-բովանդակությունը համապատասխանում է միայն այդ թվականի տարեգրքին: Երկրորդ, որ ոչ պակաս կարևոր է, Զարբհանալյանը այս նոր թվականն էլ բերում է առանց որևէ ապացույցի:

Հրատարակման 1803 թվականը նորից երևան է գալիս 1893 թ. Գրիգորիս Գալեմքյարյանի շնորհիվ: Իր «Պատմություն հայ լրագրության» աշխատության մեջ անդրադառնալով «Եղանակ բյուզանդյան-բազմավեպին», նա գրում է. ««Եղանակ բյուզանդյան» ... 1803-ին սկսավ հրատարակվիլ, ամեն տարվո սկիզբն, աշխատությամբ Հ[այր] Ինճիճյան անխոնջ գրասիրի և տևեց մինչև 1820» (էջ 27): Այնուհետև հաջորդում է տարեգրքի մանրամասն նկարագրությունը և «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» 1808 թ. համարից մի մեջբերում: 1808 թ. հրատարակված «Եղանակ բյուզանդյանի» մասին, որից մեջբերում է կատարված «Պատմություն հայ լրագրության» ուսումնասիրության մեջ, կխոսվի հետագայում, իսկ գալով համարի նկարագրին, որն անում է Գալեմքյարյանը, պետք է ասել, որ նա ևս ձեռքի տակ ունեցել է 1813 թ. համարը:

«Եղանակ բյուզանդյանի» հրատարակության սկիզբը՝ 1803 թվականն, այսպիսով, մտնում է մասնագիտական գրականության մեջ: Այդ թվականն է ընդունում նաև Գարեգին Լևոնյանն իր «Հայոց պարբերական մամուլը»[8] և

[8] Գ.Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 11-12

«Լիակատար ցուցակ հայ լրագրության»[9] աշխատություններում, թեև առաջին դեպքում նա տեսել է 1815-1820 թթ. համարները, իսկ երկրորդում՝ պատկերված է 1815 թվականի մի համար: «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» աշխատության երկրորդ հատորում հանգամանորեն քննելով «Եղանակ բյուզանդյան-բազմավեպ» տարեգիրքը (էջ 126-154), Ա.Կարինյանը քաղաքացիական իրավունք տվեց 1803 թ., հավանորեն չնկատելով անգամ, որ իր բոլոր հղումները, մեջբերումները, վկայակոչումները, իսկ դրանց թիվը հասնում է մոտ 45-ի, բերվում են «Եղանակ բյուզանդյանի» 1813 և հետագա թվականների համարներից: 1803-1820 թթ., այսպիսով, ընդունվել և արդեն օրինականացվել են որպես հիշյալ տարեգրքի հրատարակության տարիներ[10]:

Բայց այդպե՞ս է արդյոք:

Ղուկաս Ինճիճյանի կյանքի սկզբնական ժամանակահատվածը պայմանականորեն կարելի է բաժանել երկու շրջանների: Եթե առաջին շրջանում՝ 1790-1804 թվականներին նա հանդես էր գալիս որպես բեղմնավոր գրող և իրար հետևից հրատարակում կամ հրատարակության էր պատրաստում մեծ անուն ունեցող աշխատություններ («Տեսութիւն համառօտ հին և նոր աշխարհագրութեան», 1791, 600 էջ. «Ամարանոց Բիւզանդեան», 1794, 253 էջ. «Աշխարհագրութիւն Օսմանեան պետութեան», I հատոր, 1804, 450 էջ և այլն), ապա երկրորդ շրջանը, երբ նա գտնվում էր Պոլսում, բացարձակ ամլության տարիներ էին: Նախ, խիստ խանգարվել էր առողջությունը, որը երկարատև ու հիմնավոր բուժման կարիք ուներ: «Ողջ ենք ամենեքեան, – իր մի նամակում գրում էր Գաբրիել Ավետիքյանը, – բաց ի Հ(այր) Ղուկասէն, որոյ հնացեալ ախտակրութիւն, որ է գելումն ջլաց, հանդերձ նեղութեամբ ստորին մասաց

[9] Գ.Լևոնյան, Լիակատար ցուցակ հայ լրագրության, Երևան, 1934, էջ 3

[10] Մենք գիտակցաբար չենք հիշատակում մի քանի աշխատություններ, օրինակ՝ Շ.Հարությունյան, Հայ ժողովրդի պատմության համառոտ ժամանակագրություն, Երևան, 1955, էջ 16, որոնք հիմնականում վերցնելով Գարեգին Լևոնյանի տվյալները, կրկնել են հիշյալ թվականները, առանց որևէ նոր բան ավելացնելու:

մարմնոյ, որով և խափանեալ կայ յամենայն գործոց: Ապա մի ևս զայրացի ախտն, ՄԻՆՉԵՒ ԱՆՊԻՏԱՆ ԱՌՆԵԼ ԶՆԱ»[11]: Հիշյալ ժամանակաշրջանում Ինճիճյանը ոչ միայն ոչինչ չի կարողանում գրել, չի կարողանում վարել Մխիթարյան միաբանության կողմից իր վրա դրված հասարակական պարտականությունները՝ Պոլսի Մխիթարյան վարժարանների վերատեսուչ և Մխիթարյանների հրատարակությունների վաճառքը կազմակերպող գործակալ Պոլսում, այլ նույնիսկ դուրս է գալիս գրական տեսադաշտից: «1805 թվականի փետրվարեն, ուր Ինճիճյան կմեկնի Պոլիս, մինչև 1810, ինձի անծանոթ է ինչ որ նա կգործե»- գրում է Ներսես Անդրիկյանը[12]:

Ասես այս ամենն ամբողջացնելու համար՝ դարասկզբից ծայր առան հասարակական-քաղաքական մի շարք դեպքեր, որոնք սաստիկ ծանրացրին Մխիթարյան միաբանության վիճակը: 1796 թ. սկսելով իտալական արշավանքը, «Մեծ զինվորը» (Մխիթարյաններն այդպես էին կոչում Նապոլեոն Առաջինին) 1797 թ. մայիսին գրավում է Վենետիկը: Կիրառվող բազմաթիվ սահմանափակումներից մեկն էլ այն եղավ, որ բռնագրավվեց Վենետիկի կենտրոնական բանկում գտնվող Մխիթարյանների մոտ 60 հազար ֆրանկ դրամագլուխը, որի հետևանքով անտանելի պայմաններ ստեղծվեցին նրանց համար: Հետագայում, խստություններն ավելի շատացան, որոնք արձագանքն էին Նապոլեոնի և կաթոլիկ եկեղեցու ղեկավար Պիոս VII պապի հարաբերությունների վատացման: Ի լրումն այս բոլորի, 1810 թ. ապրիլի 25-ին հրապարակվեց Նապոլեոնի հրովարտակը՝ բոլոր տիպի կրոնական-կաթոլիկական հաստատությունները չեղյալ հայտարարելու, այդ բնույթն ունեցող միաբանությունները ցրելու և նրանց շարժական ու անշարժ գույքը պետության սեփականությունը դարձնելու մասին: Հասկանալի է, որ հրովարտակը վերաբերում էր նաև Մխիթարյան

---

[11] «Բազմավեպ», 1912, N 2 (Այս և հետագա ընդգծումները մերն են)
[12] Անդ, էջ 73

միաբանությանը: Եվ չնայած վերջիններս, բավական ճկուն դիվանագիտություն բանեցնելով, կարողացան հասնել նրան, որ իբրև բացառություն թույլատրվեց իրենց գործունեությունը, այնուամենայնիվ, միաբանության վիճակը առավել քան ծանրացավ: Բավական է ասել, որ XIX դարի ամբողջ առաջին տասնամյակում Մխիթարյանները մեծ դժվարությամբ ընդամենը մի քանի անուն գիրք են հրատարակում, այն դեպքում, երբ ծաղկուն ժամանակ միաբանությունը հրատարակել է տարեկան մինչև 24 անուն գիրք:

Հասկանալի է, որ արտաքին ու ներքին այս բոլոր պայմանները շատ փոքր հնարավորություն էին ընձեռում Ինճիճյանին տարեգրքի ինքնուրույն հրատարակություն սկսելու համար: Եվ իսկապես, փաստերը գալիս են ամբողջացնելու վերը նշվածը: 1812 թ. «Դիտակ բյուզանդյան» երկշաբաթաթերթը «Բանասիրական» խորագրի ներքո մի հաղորդում է տպագրում «Ի նորերս լույս տեսած» «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» այդ նույն թվականի տարեգրքի մասին: Նկարագրելով այնտեղ զետեղված նյութերը, դրանց դասավորությունը և համառոտ վերլուծությունը, վերջում ավելացվում է հետևյալ շատ կարևոր նկատումը. « «Եղանակին» սա թիվը շատ ավելի ընդարձակ է ու ճոխ, ՔԱՆ ՆԱԽՈՐԴ ԵՐԿՈՒ ՀԱՏՈՐՆԵՐԸ, որք դիպաց բերումով՝ լղրճկեկ ու պզտի բան մը եղան»[13]:

Այսպես, ուրեմն, մինչև 1812 թ. «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» ընդամենը երկու տարեգիրք է հրատարակվել, այն էլ՝ «լղրճկեկ ու պզտի բաներ»: Սա ասված է որոշակի և հասարակական-քաղաքական այն դեպքերի բերումով, որոնց մասին վերևում խոսեցինք, ավելին սպասել չէր էլ կարելի:

Հարց է ծագում. ո՞ր թվականներին են լույս տեսել այդ երկու տարեգրքերը:

---

[13] «Դիտակ Բյուզանդյան», 1812, էջ 27:

1813 թ. «Եղանակ բյուզանդյանում» նկարագրելով օդի կառուցվածքը, Ինճիճյանը գրում է. «Ան օդը, որ սա մեր մթնոլորտին մեջն է, մեկ պարզ տարր չէ… օրինակ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԳՐԵՐ ԵՆՔ 1809 ԵՂԱՆԱԿԻՆ ՄԵՋ… » (էջ 103)։ Այլևայլ առիթներով վկայակոչելով տարեգրքի զանազան համարները, իսկ այդպիսի վկայակոչումների թիվն անցնում է հիսունից, Ինճիճյանը 1812 թ. առաջ եղած որևէ այլ համար չի հիշատակում, բացի վերևում բերված 1809-ից։ Մնում է եզրակացնել, որ մինչև 1812 թվականը հրատարակված երկու «լղրճկեկ» հատորներից մեկը հրատարակվել է 1809 թ.։ Իսկ ինչ վերաբերում է մյուս հատորին, արդեն ասացինք, որ Գրիգորիս Գալեմքյարյանը, տալով «Եղանակ բյուզանդյանի» նկարագրությունը, մի մեջբերում է կատարում այդ տարեգրքի հազվագյուտ՝ 1808 թ. համարից։ Գրիգորիս Գալեմքյարյանի այս պնդմանը չհավատալու և նրա հիշատակած փաստը կասկածի տակ առնելու ոչ մի հիմք կամ պատճառաբանություն մենք չունենք։ Եվ եթե այս բոլորին էլ ավելացնենք, որ 1803-1812 թվականների տարեգրքերը, բացի նշված 1808 և 1809 թթ., մեր մամուլի պատմությամբ զբաղվողներից ոչ ոք երբեք չի տեսել, չի նկարագրել և չի վկայակոչել, ապա կարելի կլինի պնդել, որ «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը» սկսել է հրատարակվել 1808 թվից։

Հրատարակելով 1808-ին մեկ տարեգիրք և 1809-ին երկրորդը, Ինճիճյանը հետագա երեք տարիներին լռում է։ «Եղանակ բյուզանդյանը» նորից հանդես է գալիս 1812 թ. և այս անգամ արդեն կապված «Արշարունյաց ընկերության» հետ։

1812 թ. կեսերին Պոլսում Հակոբ, Մկրտիչ և Հովհաննես Տյուզյանների ֆինանսական օժանդակությամբ հիմնվում է «Արշարունյաց ընկերություն» գրական-հասարակական կազմակերպությունը։ Ինճիճյանը, որն այդ ընկերության «ոգին ու շոգին էր» այնքան, որ «ամբողջ ընկերությունը ուրիշ բան

չէր, բայց եթե Ինճիճյան», աստիճանաբար կարողանում է հասնել նրան, որ Տյուզյանները ֆինանսապես օժանդակեն նաև «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը», «Դիտակ Բյուզանդյան» շաբաթաթերթի հրատարակությունը ֆինանսավորելուց բացի: Այս արարքի տեսական-հասարակագիտական պատճառաբանությունը Ինճիճյանը գտել էր բավական հիմնավոր կերպով. եթե Պոլիսն ունի հայ գրասերներից բաղկացած գրական-հասարակական, մշակութային կազմակերպություն՝ «Արշարունյաց ընկերությունը», ապա այն պետք է ունենա իր գաղափարներն ու անելիքները ժողովրդի մեջ տարածող որևէ տպագիր օրգան, որի հրատարակության համար ֆինանսական օգնություն էր անհրաժեշտ: Ինչպես և կարելի էր սպասել, Տյուզյանները չեն զլանում ու գործն ընկնում է բնականոն հունի մեջ: Սա է պատճառը, որ տարեգրքի բոլոր հետագա համարները, թե նյութի ընդգրկման, թե նրա բազմազանության, մատուցման եղանակի, նույնիսկ պոլիգրաֆիկ հրատարակության տեսակետից, անհամեմատ ավելի բարձր մակարդակի վրա են գտնվում, քան նախորդները: 1812 թ. «Եղանակ բյուզանդյանը» մեզ չհաջողվեց գտնել, ինչ վերաբերում է 1813 թ. տարեգրքին, ապա այն նույնիսկ դուրս է գալիս այն համեստ սահմաններից, որ նախանշել էր Ինճիճյանը՝ «Եղանակը պզտիկ, բայց իբր դասատետր մըն է. մեջը շատ աղեկ օգտակար բաներու համարներ կուտա, որ կարդացողը ամեն մեկ տարին միտք առնելով, առանց հոգնելու քիչ քիչ բան կըսորվի» (էջ 6): Այս ծրագիր-պլանը Ինճիճյանը աշխատել է պահպանել նաև հետագա հատորների համար և դա լավագույնս հաջողվել է նրան: «Եղանակ բյուզանդյանն», այսպիսով, ամիսների ու օրերի հետ կապված օդերևութաբանական-աստղաբաշխական տվյալներ պարունակելուց բացի, առօրյա ընթերցանության համար նախատեսված և առօրյա պահանջները բավարարող «դասատետր մըն» էր:

Ոչ պակաս կարևոր մի փաստ է բացահայտվում, երբ քննում ենք «Եղանակ բյուզանդյան-բազմավեպի» 1815 թվականի համարը:

Ինչպես արդեն նշեցինք, Ինճիճյանը մեր այն հեղինակներից է, ով սովորություն ունի ընթերցողին անընդհատ հղել դեպի «Եղանակի» այս կամ այն հատորները, տվյալ իրողության վերաբերյալ ավելի հանգամանալից տեղեկություններ ստանալու համար: Վերոհիշյալ 1815 թ. համարում, օրինակ, խոսելով աշխարհագրության մասին, նա գրում է. «Ինչպես որ ԱՆՑԱԾ ՏԱՐՎԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ ՄԵՋ ԳՐԵՑԻՆՔ, անանկ կարդաս աշխարհագրությունը, որ քեզի գիտելիքներ ժողովես» (էջ 127): Կամ նկարագրելով մոլորակները, նրանց դիրքը, դասավորությունը, շտապում է ավելացնել, որ «Մոլորակներուն անունները ու շարժմունքները գրինք ԱՆՑԱԾ ՏԱՐՎԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ ՄԵՋ» (նույն տեղում): 1815 թ. «Եղանակ բյուզանդյանում» այս կարգի հղումները կատարված են 9 անգամ: Սակայն ուշադիր քննությունը բացահայտում է շատ կարևոր մի հանգամանք: «Անցած տարի» ասելով Ինճիճյանը հասկանում է ոչ թե 1814 թ. համարը, ինչ որ պետք է սպասել և որը բնական է, այլ մեկ տարի հետ՝ 1813-ը, քանի որ կատարված բոլոր հղումները գտնում են «Եղանակ բյուզանդյանի» 1813 թ. համարում: Կարծես ավելի հաստատելու համար մեր այս եզրակացությունը, Ինճիճյանը 1815 թ. տարեգրքում նկարագրելով տարիքի հետ մարդու բնավորության փոփոխությունները, գրում է. «Ահա քեզի մեկ պատճառ մը, ինչու ըսինք ԱՆՑԱԾ ՏԱՐՎԱՆ ԵՂԱՆԱԿԻՆ ՄԵՋ, թղթ. 22 «Եկավ ատեն, որ կենճը ծերացավ... տղան մարդ դարձավ» (էջ 44)»: Ինճիճյանի բերած այս մեջբերումը նույնությամբ գտնվում է 1813 թ. «Եղանակ բյուզանդյան-բազմավեպում», որտեղ նշված 22-րդ էջում կարդում ենք. «Եկավ ատեն, որ կենճը ծերացավ, ծերը կենճըցավ, տղան մարդ դարձավ: Աղեկ մտածե աս իրեք խոսքերն ալ...»: Ասվածից պարզ է, որ 1815 թ. «Եղանակ բյուզանդյանում» «անցած տարի» ասելով Ինճիճյանը հասկանում է այդ տարեգրքի 1813 թվականի համարը և 1815 թ. համարը դիտում է որպես 1813 թ. «Եղանակ բյուզանդյանի» օրգանական շարունակությունը: Եվ եթե այս բոլորին ավելացնենք նաև, որ հետագա հատորներում կատարած բազմաթիվ

հղումներում Ինճիճյանը երբեք չի հիշատակում 1814 թ. համարը, իսկ հղում առ մյուս թվականների հատորները կատարվում է բազմիցս, ապա կարելի կլինի վերջնականապես պնդել, որ «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը» 1814 թ. չի հրատարակվել:

Հետագա հրատարակությունների թվականների հարցը արդեն մեծ բարդություններ չի ներկայացնում: 1815-ից մինչև 1820 թվականը ներառյալ, «Եղանակ բյուզանդյանը» հրատարակվել է անընդմեջ, ավել կամ պակաս հարստությամբ, տարին մեկ հատոր: Այս համարներում է Ինճիճյանը սկսում հանդես գալ իր բազմաթիվ հոդվածներով, պոեզիայի հարցերին նվիրված տրակտատներով, դարաշրջանի հասարակական-քաղաքական երևույթները մեկնաբանող խորանիստ տեսություններով, որոնք նրան ներկայացնում են իբրև ժամանակի լուսամիտ մարդկանցից մեկը:

1819 թ. վերջերից ծայր առած իրադարձությունները, սակայն, նորից փոխում են դեպքերի ընթացքը:

Պետության մեջ առաջին մարդիկ համարվող Տյուզյանները մեղադրվում են դրամաշորթության և պետական միջոցները շռայլելու մեջ: Ճի՞շտ էր արդյոք այդ մեղադրանքը, այդպես էլ հետագայում չպարզվեց, բայց հետևանքն այն եղավ, որ երեք եղբայրներն էլ հեռացվեցին իրենց զբաղեցրած պետական բարձր պաշտոններից: Այս բանը ծանր հարված է հասցնում «Արշարունյաց ընկերությանը», որը 1820 թ. դադարում է գոյություն ունենալուց: Ինքը՝ Ինճիճյանը, որն իր ազգային-հայրենասիրական բնույթի հոդվածներով ու ելույթներով արդեն հարուցել էր Օսմանյան պետության կասկածը, 1819թ. վերջերին փախչում է Օդեսա, որտեղ և մնում է երկար ժամանակ: «Եղանակ բյուզանդյանի» հրատարակությունը շարունակելու մասին խոսք լինել արդեն չէր կարող:

Ինճիճյանի համար այս բոլորից, թերևս, ամենածանրը հայ ժողովրդի անտարբեր վերաբերմունքն էր դեպի «Եղանակները»: Որն էր դրա սոցիալական և գրական-հասարակական պատճառը, արդեն նշել ենք: Այդ անտարբերությունն էլ հիմք է տվել նրան՝ գիտության կարևորության մասին խոսելուց հետո, հետևյալ նյարդային տողերը գրել. «Ասկից կերևա որ՝ որչափ հարկավոր բան են ասոնք մարդուս, բայց աս հարկավորությունը դուն ինչվան հիմա չիմացար, որովհետև ԵՂԱՆԱԿՆԵՐԸ աս մտքով հանեցինք, մեջը ամենեն մեյ մեկ ծաղիկ, մեյ մեկ գիտելիք ժողված դրինք, որպես զի դուն ամմեն տարի քիչ քիչ հանգիստ սորվիս, զավկիդ ալ ցըցընես սորվելու, բայց դուն անոնք բանի տեղ չի սեպեցիր»[14]:

Այսպիսով, կարելի է վերջնականապես եզրակացնել, որ «Եղանակ բյուզանդյան-բազմավեպը», որը խմբագրել է Ղուկաս Ինճիճյանը, հրատարակվել է որպես տարեգիրք 1808, 1809, 1812, 1813, 1815-1820 թթ.:

1965-1966թթ.

---

[14] Ղ. Ինճիճյան, Դարապատում, հ. 7, Վենետիկ, 1827, էջ 42: